ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «14» սեպտեմբերի 2018թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Գրիգոր Գաբրիելյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, «Բի Լայն» ՍՊԸ-ն, «ՓԻ-ՍԻ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /այսուհետ՝ Կոմիտե/ հարցում ներկայացնելու և հարցման մասին տրամադրված եզրակացության վերաբերյալ.

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն համապատասխան հարցում է ներկայացվել Կոմիտե, Կոմիտեից սահմանված ժամկետում տրամադրվել է եզրակացությունը:

Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

-հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 5-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժինների մասով մերժել,

-1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էֆ-լայն Թրեյդինգ» ՍՊԸ-ին,

-7-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ին,

-ընթացակարգը 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին),

-հաստատել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով ընթացակարգը 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝

1) նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

3) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. սեպտեմբերի 19-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

-Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. սեպտեմբերի 24-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Էդգար Մելքոնյան

Անդամներ՝

Էդգար Տոնականյան

Գրիգոր Գաբրիելյան

Խորեն Պետրոսյան

Արթուր Թամրազյան

Քարտուղար՝

Արուս Խաչատրյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37»**

Դատական դեպարտամենտն ստորև ներկայացնում է իր կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով գնման ընթացակարգը 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Չափաբաժնի համար	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
5.	Գունավոր տպիչներ	«Կոմպմարկետ» ՍՊԸ	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ
6.	Պատճենահանման մեքենա	«Կոմպմարկետ» ՍՊԸ «Էֆ-լայն Թրեյդինգ» ՍՊԸ	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով գնումների համակարգող Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ **010-511-787**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@mail.ru**:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**: